«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝
Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների աշխատանքին

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մարետա Ասատրյան

Ուսումնական հաստատություն՝ Շղարշիկի Ա.Մինասյանի անվան
Միջնակարգ դպրոց

Երևան 2022

Ըստ <<ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության՝ առարկայական մեթոդական միավորման աշխատանքի գլխավոր խնդիրն է.

-Հանրակրթական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպում,կրթության որակի բարձրացում.

-Առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացում:

Մեթոդ միավորման աշխատանքները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել,որ

քննարկվող հարցերը լինեն կոնկրետ և նպատակային.ելնելով դպրոցի շահերից:

-Դպրոցի ուստարվա հիմնախնդիրների լուծում.

-Վերազինում և՛ առարկայական,և՛մեթոդամանկավարժական

-Ուսուցիչների որակավորման բարձրացում.

-Մանկավարժական առաջավոր փորձի ներդնում.

-Սկսնակ ուսուցիչներին ատեստավորման նախապատրաստում.

Նպատակս է եղել որպես մեթոդմիավորման մասնակից-ուսուցիչ ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցչին: Սկսնակ ուսուցչի դասը պետք է արդյունավետ լինի:Սակայն ինչպե՞ս.

Մեր դպրոցում տասնամյակներ շարունակ ղեկավարում եմ տարրական կրթության մեթոդմիավորմը:Ունեմ մասնախմբի տարեկան աշխատանքային պլանը:

Ձևավորում եմ նիստերի օրակարգեր.ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Ընտրությունը օրակարգերի կազմում եմ մեր դպրոցի հիմնախնդիրներից ելնելով:Պլանի կազմումը ներկայացնում եմ ըստ ամիսների.

Օրակարգի հարցերից մի հարցը ամեն ամիս պտտվում է սկսնակ ուսուցչի շուրջը:

-Սկսնակ ուսուցիչը դասրանում և դասարանից դուրս.

-Ինչպիսի՞ն է նրա պատրաստվածությունը և դասի բացատրումը.

-Մանկավարժական մեթոդական իմացությունը.

-Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը.

-Սերն ու վերաբերմունքը

-Մոտեցման ձևը

-Գնահատման հուսալիությունն ու հավաստի լինելը և այսպես շարունակ.

Ուրեմն եզրակացությունը հետևյալն է.սկսնակ ուսուցիչների վերահսկոցությունը մանկավարժական պրակտիայի ընթացքում:

Ով իր մեջ կրակ ունի,կփոխանցի այն ուրիշներին:(Պլատոն)

Եթե նոր ուսուցիչները պատրաստվում են հին եղանակով,եթե նրանք չեն սովորում այն,ինչ ուզում են սովորեցրած լինել իրենց աշակերտներին:

Սովորել սովորեցնելը ողջ կյանքի ընթացքում տևական,շարունակական աշխատանք է,որը նպաստում է մարդու(մասնագետ) կատարելագործմանը:Մեր ժամանակներում մանկավարժական պրակտիկայի կատարելագործումը փոփոխության կարիք է զգում,որը չափազանց անհրաժեշտ և բարդ պրոցես է ըստ աշխարհի մանկավարժական պրակտիկայի:

Կրթական համակարգը երկարատև է և աստիճանավորված որոշ երկրներում՝ Գերմանիա,Լյուքսեմբուրգ,Բելգիա:

Աշխարհում բարեփոխումները՝ օրինակ Ֆրանսիայում տվեցին հետևյալը և որոշվեց,որ և՛ տարրական,և՛ միջին դպրոցի ուսուցիչները պետք է ավելի խորը գիտելիք ունենան առարկայական և մանկավարժական:

Իսկ հիմա ճապոնացիների օրինակով. սկսնակ ուսուցիչը հանձնում է բարձր որակավորում պահանջող ընդունելության քննություն և մտնում է դպրոց և աշխատելով վարպետ ուսուցչի ղեկավարությամբ՝

1.աջակցում է

2.խորհուրդներ տալիս

3.վերահսկում

Այս ամենը կատարվում է կենդանի մանկավարժական գործունեության ընթացքում:

Կատարվում է դասալսումներ:

Իմ տեսածը միայն գործնականում կիրառելուց հետոո եմ ես սկսում մտածել(Կենյի Յամոտան)

Զարգացումն ու կրթությունը ոչ մեկին չեն կարող
տրվել կամ հաղորդվել:Ամեն ոք,որ ուզում է հաղորդակցվել դրանց,պետք է հասնել այդ ամենին իր սեփական գործունեությամբ,սեփական ուժերով,սեփական ջանքերով:

Արտաքուստ նա միայն խթան կարող է ստանալ:

Այդ իսկ պատճառով էլ ինքնագործունեությունը կրթության և՛ միջոցն է,և՛ արդյունքը:

Ա. Դիստերվեգ

Երբ գրեցի վարպետ-ուսուցիչ բառակապակցությունը ակամայից հիշեցի իմ հորը,որը 50 և ավելի տարվա մանկավարժական փորձ ուներ,վաստակավոր ուսուցչի կոչմանն արժանացած:Հորս անվանում էին վարպետ-ուսուցիչ,դա ընդունում էին լավագույն հպարտությամբ,բայց լրիվ չէին պատկերացնում ասվածի իմաստը,իսկ որոշ ժամանակ անց հասկացա,վարպետը դա իր գործը լավ իմացողն է,նույնիսկ՝ գիտակ:

1.Սկսնակ ուսուցչին շատ է կարևոր մանկավարժական պրակտիկան:

2.Աջակցություն է պետք սկսնակ ուսուցչին:

Ուսուցչի մասնագիտական զարգացման հիմնական գործոն է համարվում<<գործնակն աշխատանքում աճելը>>:

Մասնագիտական աճը չափազանց կարևոր է սկսնակ ուսուցիչների՝ մասնագիտական կայացման համար:Ես շատ եմ կարևորում այն,որ ուսուցիչը կարողանա լիովին ընկալել ուսուցչի դերը:Դժվարությունները շատ են:Շատերի կարծիքով շատ թերությունների պատճառը ուսուցչի մասնագիտական վատ պատրաստվածությունն է,կրթական ծրագրերի անկատարությունը:

Սկսնակ ուսուցիչը փորձառություն է ձեռք բերում դպրոցում աշխատելիս:Սակայն ստացվում է այնպես,որ սկսնակ ուսուցչի սպասելիքները,երազանքները դպրոց մտնելուց հետո հաճախ հանդիպում և բախվում է իրականությանը և հասկանում,որ դա իրատեսական չէ:Վիճակագրական տվյալներով այդ ուսուցիչների 30% թողնում են դպրոցը և ընտրում ուրիշ մասնագիտություն:

Սկսնակ ուսուցիչների հոգսերը թեթևացնելու համար 1999 թվականին <<Ազգային ուսուցիչ>> ճանաչված Էնդի Բամգարտները տալիս է խորհուրդների մի հետաքրքիր շարք,որոնք անվանել է<<10 պատվիրան,որոնք ուսուցչի հաջողության գրավականներն են>>:

1.Սովորելը դարձրու ուրախ,ծիծաղարժ:

2.Հաճույք ստացիր քո աշխատանքից:

3.Դրական արտահայտվիր քո մասնագիտության մասին:

4.Ուրախացիր ամենափոքր հաջողությունների համար:

5.Հոգա քո աշակերտների մասին:Գնահատի՛ր նրանց մեջ գտնվելու հնարավորությունը:Հարգի՛ր նրանց:

6.Մի՛ ձգտիր քայլել տրորված ճանապարհով,գտի՛ր քո ուղին:

7.Մի՛ վախեցիր սխալներից:Համարձակ նորարարության դիմի՛ր և սովորիր սեփական սխալների վրա:

8.Հետաքրքրություններ գտի՛ր դպրոցից դուրս:Այդ կյանքով ապրիր նույնքան հաճույքով,որքան հաճույքով աշխատում ես:

Աշխատանքիդ մեջ ներգրավի՛ր ընտանիքի անդամներին և ընկերներիդ ակնկալի՛ր նրանց օգնությունը:

9.Գտի՛ր քո ղեկավարին(մենթորին) և վստահելի անձին,քո սրտի ու հոգու ողջ գանձարանը ներկայացրու նրան:

10.Մի՛ հուսահատվիր:Ուսուցման մեջ միշտ գոյություն ունի մի այլ տարբերակ:

Գոյություն ունի նաև ուսուցչի տասը պատվիրանները ըստ Ջորջ Փոյայի:

Թանկագին ուսուցի՛չ , մի՛ ենթարկվեք ոչ մի հեղինակության՝ թող ձեզ ղեկավարի միայն սեփական փորձը և այդ փորձի վրա խարսխվող սեփական դատողությունը: Պետք է աշխատել պարզ տեսնել,թե ինչ է նշանակում այս կամ այն խորհուրդը կոնկրետ իրադրության մեջ,որին հանդիպել և բախվել եք:

Անհրաժեշտ է փորձարկել այդ խորհուրդը դասարանում և կայացնել ձեր վերջնական եզրակացությունը՝ միայն անցկացրած փորձի անաչառ վերլուծությունից հետո:

Ուզում եմ ասել ուսուցչի տասը պատվիրանները,առանց մեկնաբանությունների.

1.Հետաքրքրվել պարապվող առարկայով.

2.Իմանալ առարկան.

3.Իմանալ,թե որ ճանապարհով կարելի է ուսումնասիրել այն,ինչը ձեզ անհրաժեշտ է:Ուսումնասիրման լավագույն ձևն է ինքնուրույն հայտնաբերելը:

4.Կարողանալ կարդալ աշակերտների դեմքերը:Ջանալ տեսնել,թե ինչ են սպասում նրանք ձեզանից,ըմբռնել նրանց դժվարությունները,կարողանալ ձեզ իրենց տեղը դնել:

5.Չսահմանափակվել մերկ տեղեկատվությամբ,կարողանալ աշակերտների մոտ որոշակի ունակություններ,խելքի անհրաժեշտ կերտվածք և կանոնապահ աշխատանքի սովորություն զարգացնել:

6.Աշխատել նրանց կռահել սովորեցնել:

7.Ձանալ նրանց ապացուցել սովորեցնել:

8.Եղած մեթոդների մեջ հանել ընդհանուր մեթոդը:

9.Ձեր կարծիքը անմիջապես մի՛ հայտնեք,թող աշակերտները փորձեն կռահել այդ գաղտնիքը:

10.Անհրաժեշտ է օգտագործել գլխի գցող ցուցումները,ձեր կարծիքը մի՛ պարտադրեք:

Այս խորհուրդները օգնում են,սակայն գոյություն ունեն աջակցության հատուկ ծրագիր,որով նրանք կկարողանան այս ամենը իրականություն դարձնել,անհրաժեշտ է մինչև աշխատանքի անցնելը սովորածը պահպանելու և զարգացնելու համար:

Սկսնակ ուսուցիչը աջակցության կարիք ունի հետևյալ հարցերում.

1.դասարանը կառավարելու կամ դասարանավարության.

2.դպրոցական համակարգի մասին տեղեկատվություն ձեռք բերելու.

3.մեթոդական նյութեր և միջոցներ հայթայթելու.

4.ուսուցման և մասնագիտական այլ պարտականությունների կատարման հարցում.ինչպիսիք են պլանավորումը,կազմակերպումը,կառավարումը և մասնագիտական այլ պարտականություններ.

5.աշակերտներին գնահատելու և նրանց առաջադիմությունը գնահատել-արժևորելու.

6.աշակերտների ուսումնառության շարժառիթների ձևավորման.

7.դասավանդման արդյունավետ մեթոդների կիրառմամբ.

8.առանձին աշակերտների կարիքներով, հետաքրքրություններով,նրանց կարողություններով ու խնդիրներով զբաղվելու

9.գործընկերների,մյուս ուսուցիչների և վարչական աշխատողների հետ հաղորդակցվելու.

10.ծնողների հետ հաղորդակցվելու.

11.դասավանդման միջավայրին և ուսուցչի դերին հարմարվելու,հուզական աջակցություն ստանալու:

Այսպիսով՝ յուրաքանչյուր սկսնակ ուսուցիչ աջակցության ծրագրի կարիք ունի:Ծրագրերը նախ և առաջ պետք է նախատեսվեն՝իբրև դպրոցական համակարգի և աշխատակազմի մասնագիտական կատարելագործման գործընթացի մի մաս:

Ըստ Գորդոնի միասնական թիմ պետք է համարվեն սկսնակ ուսուցիչների պատրաստման /կատարելագործման կազմակերպությունը՝ կենտրոնական վարչությունը,վարչական աշխատողները,ուսուցիչների տեղական ընկերակցությունը և բոլոր ուսուցիչները հիմնականում:

1.Սկսնակ ուսուցիչների հետ աշխատելու փորձ ունեցողները,կարող են ընդգրկվել՝ որպես խմբի խորհրդատու:

2.Նախնական կարիքների գնահատում:Տեղեկատվական մի շարք աղբյուրներ կարող են օգնել խմբին՝ զգալու սկսնակ ուսուցիչների և նրանց ղեկավարների ընդհանուր կարիքները:

3.Ըստ կարիքների գնահատման ձևակերպվում է և ընդհանրացվում է ընդհանուր նպատակները և խնդիրները:

Նպատակ 1.Սկսնակ ուսուցիչներին մասնգիտական և անհատական օգնություն ցույց տալու համար գործող մանկավարժ-ղեկավարները պետք է մշակված ունենան հմտություններ:

Առաջին նպատակը ունի իր հիմնական խնդիրները:

Մանկավարժ-ղեկավարի կատարելագործում:

ա)Հմտություններ կարիքների գնահատման.

բ)հաղորդակցման.

գ)հիմնախնդիրների լուծման.

դ)ղեկավարման.

ե)հակասությունների լուծման.

զ)հմտություններ,որոնք անհրաժեշտ են չափահասների ուսուցումը հեշտացնելու համար

է)գործնական կարողությունների զարգացման համար

Նպատակ 2. Սկսնակ ուսուցիչները անպայման պետք է ունենան գիտելիքներ դպրոց գնալու համար և համայնքը կողմնորոշվելու համար:

Նպատակ 2-ի խնդիրներն են՝

1.Իմանալ համայնքի պատմությունը

2.Պատկերացում ունենալ ժողովրդագրության մասին

3.Ռեալ տեսնել համայնքի հնարավորությունները

4.Իմանալ տեղեկություններ աշակերտների մասին

5.Իմանալ դպրոցի ուսումնական ծրագրերի մասին

6.Գործընկերների մասին,որոնց հետ ինքը պետք է աշխատի

7.Տեղը,կառույցը դպրոցական,որտեղ աշխատելու է սկսնակը

8.Դպրոցական հնարավորությունները

Նպատակ 3. Սկսնակ ուսուցիչը պետք է մշակի և զարգացնի հմտություններ,որոնց շնորհիվ դասավանդումը ավելի արդյունավետ կլինի:

Հիմնական խնդիրներն են `

. դասարանը կառավարելու,դասարանավարության համար

. աշխատանքի ծրագիրը պլանավորելու և ղեկավարելու համար

. դասը արդյունավետ նախապատրաստելու և անցկացնելու համար

. արդյունավետ մեթոդներ կիրառելու համար

. աշակերտների աշխատանքները գնահատելու համար

գ) Սկսնակ ուսուցիչների աշխատանքի ղեկավարում

Ղեկավարումը՝ մեթոդիստի աշխատանքը սկսնակ ուսուցչին աջակցելու ծրագրերի հիմնաքարն է:

Ըստ Սալիվանի հաջող ղեկավարման երաշխիքներից մեկը համապատասխանությունն է հետևյալ գործոնների միջև:

ա)ինչպիսի՞ն է իր կողմից ղեկավարվող սկսնակ ուսուցիչը.ի՞նչ գիտի,ինչի՞ կարիք ունի.

բ)ի՞նչ է տալիս նրան մանկավարժ-ղեկավարը:

Այս պարագայում ղեկավարի դերը կայանում է նրանում,որ ոչ թե քայլ առ քայլ թելադրի ուսանողին իր անելիքները,այլ ստեղծի ընդհանուր գաղափարների ընկալման միջավայր: Գլխավորն այն է,որ զանազան փոփոխվող պայմաններում և

տարբեր մարդկանց հետ աշխատելիս նա կարողանա ոչ թե թելադրել,այլ կառավարել մարդկանց վարքագիծը:

Ըստ Սալիվանի մանկավարժ-ղեկավարը կարող է դրսևորվել հետևյալ նկարագրվածությամբ.

. սահմանել նպատակներ.

. ունկնդրել.

. կարողանալ հասկանալ ուրիշներին և նոր մթնոլորտի ստեղծում.

. տեղեկատվության և աղբյուրների որոնման և փոխանակման ստեղծում.

. խթանում բարձր նվաճումների հասնելու ձգտման.

. ուժեղ և թույլ կողմերի տարբերակում.

. լավ մասնագետ դառնալու ձգտման.

. համապատասխան աջակցության ապահովում.

. տեսնել ձեռքբերումները և ընդունել հաջողությունները.

. ուրիշների ընդունակությունները տեսնելու և հմտությունների զարգացում.

. մտածել մանկավարժ-ղեկավարի դերի և վերասահմանման մասին.

. կենտրոնացում մշակույթի վրա

. մենթորի աշխատանքի պլանավորում և ծրագրավորում.

ա) մեթոդիստ-ղեկավարի աշխատանքի հայեցակարգը.

բ) մոտեցումներ

գ) գործունեություն

դ) գաղափարներ և իդեալներ

Մարդուն անհնար է սովորեցնել ամբողջ կյանքի համար,նրան պետք է սովորեցնել սովորել ամբողջ կյանքում:

դ) Սկսնակ ուսուցչի զարգացումը և գնահատումը.

Մասնագիտական գործունեության համար ուսուցիչը կրթություն է ստանում համալսարանների և քոլեջների պաշտոնական դասընթացների միջոցով:

Մյուս կողմից այդ կրթությունը կարող է վերաբերել ուսուցիչների մասնագիտական զարգացմանը:Այդ կրթությունը իրականացվում է 1.քննարկումների միջոցով, 2.գործնական փորձի հիման վրա անդրադարձ-քննարկումների ու

խորհրդակցությունների միջոցով:Աշխարհի շատ հեղինակավոր մարդկանց տեսությունների <<ուսուցչի կատարելագործման>> դերը նրա՝ որպես <<ամբողջական անհատի>> սեփական ներուժի զարգացումն է՝ ուրիշների հետ համագործակցության և փոխազդեցության միջոցով(գործընկերներ,Մանկավարժ-ղեկավարներ,փորձառու ուսուցիչներ,ծնողներ):

գ)ներածություն- Ընտրված թեման է.<<Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ-միավորումների(առարկայական մասնախմբերի) աշխատանքներին>>

Բոլոր ժամանակահատվածներում մեթոդմիավորման աշխատանքներին մասնակցում են ուսուցիչներ. ամեն մեկն համապատասխան առարկայական մեթոդմիավորումներին:Լինում է այնպես,որ մասնախմբերի ուսուցիչների մեջ որոշ հավանականությամբ լինում են սկսնակ ուսուցիչներ:

Կարևորությունը այս հարցի ուշադրությունն ու աջակցությունն է սկսնակ ուսուցիչներին:

Նախագահում եմ տարրական մասնախումբը երկար ժամանակ Շղարշիկի միջնակարգ դպրոցում և ունեցել եմ սկսնակ ուսուցիչներ: Մշտապես զգացել եմ այս հարցի կարևորությունը,առանց անտարբերության,որը չարիք է ամեն հարցում:

Բովանդակության բաժնում մանրամասն ներկայացրել եմ իմ երկարատև մանկավարժական փորձը և դրան ավելացնելով ուրիշ գրականություններից օգտագործվածները:

Եզրակացություն- Միայն մարդ անհատի գոնե բավարար ստացած մասնագիտական կրթության ավելացրած մասնագիտական ինքնակրթությունը

.ուսումնասիրում

.համակարգում

.վերլուծում

.ընդհանրացում

.համադրում

.մշակում

.դիտարկում

Ավելացրած օգտագործվող նորարարությունները,արդի պայմանների անհրաժեշտ պահանջները,բազմակողմանի զարգացվածությունը և շատ ու շատ աշխատասիրություն:

Աշխատանքի նպատակն է.

.սկսնակ ուսուցիչների մանկավարժական պրակտիկան

.մանկավարժական պրակտիկան կրթական համակարգում

.աջակցություն

.աշխատանքի ղեկավարում

.զարգացում և գնահատում